

դաւան և այլացեղ ռուս հպատակները: Ո՞վ չէ յիշում Գոստոսիովսկու յիմարական նամակը ռուս ուսանողութեանն ուղղված. այդտեղ նա պարզ գրուցացում է ռուս մաքուր ուսանողութեանը գանազան հրէաների, հայերի և այլ ազգութիւններին պատկանող ուսանողների ընկերութեանը....

Սլավոնոֆիլները երազում են մի տէ՛ն, որ և է հաստատ օրէնքներից զուրկ մի հասարակութիւն, քաղաքական օրէնքներից զուրկ մի պետութիւն, որտեղ ամեն բան հիմնված կը լինի բարոյական փոխադարձ յարաբերութիւնների վրա: Պետութիւնը մի ահագին նահապետական ընտանիքն է, առանց պաշտօնականի, առանց դատաստանի, առանց քաղաքային, գաւառական կամ կենտրոնական ինքնավարութեան, առանց զօրքի, մի ընտանիք, հօրից և երեխաներից բաղկացած, որտեղ ամենքը միմեանց սիրում, յարգում են, որտեղ ամենքը արդար են, մարդասէր են....

Հաստատ ձև, կոնօն, օրէնք, իրաւարանական գաղափար,—այդ բոլորը աւելորդ է: Պետութիւնը մի նահապետական մեծ ընտանիք է. ժողովուրդը և իշխան,—աւելորդ ոչինչ: Այդ պատճառով Գոստոսիովսկու իր գէշին էր վանքը:

Ախալով այլ ևս անկարող է ստրկարար հետեւել հանգուցիալ Գոստոսիովսկու խելագար մտքերին. նա գիտէր որ ծաղրելի կը դառնար, եթէ կատարելագէտ մեթէր իր աւուրքը, օրէնքը, պետական օրինական գաղափարը, վերջապէս իր աւարանութիւնը: Բայց և հաստատել իրաւունքի գաղափարի պահանջը նոյնպէս չէ կարող, որովհետեւ դաւաճան կը լինի իր կուսակցութեանը: Այդ պատ-

ճառով, երբ խօսքը գալիս է օրէնքի, իրաւունքի, պետութեան օրինական ձևի կազմակերպութեան վրա,—նա խառնվում է, լուռ է, երբեք այդ հարցին ուղղակի չէ պատասխանում... Եւ շարունակում է ազդակել. եթէ բոլոր մարդիկ բարոյական լինէին, նրանք երբեք հարկաւորութիւն չէին ունենայ ոչինչ հասարակական կամ պետական սահմանադրութիւնների:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅ

Յունիսի 10

Յօդուտ Բագուի Բէալական ուսումնարանի այս տարվայ ուսումնաւարտ հայ չքաւոր աշակերտների նշանակված հասարակական դրօսանքը կիրակի երեկոյեան կայացաւ քաղաքային ազգութեան լեզուակի բարեաւթիւնը, հասարակութեան սովորականից դուրս ուրախ տրամադրութիւնը և վերջապէս մի մի քանի հայ ընտանիքների քնքոյն սեռին պատկանող անդամների յօժարակամ մասնակցութիւնը մի առանձին չքաւորութիւն էին տալիս հանդիսին, թողնելով ամենքի վրա գեղեցիկ տպաւորութիւն: Երբ որ Կ. Պոլսում կամ մի ուրիշ տեղ մի այդպիսի հանգէս է լինում հայ լրագրողների թղթակիցները միջ ամենամանրամասն տեղեկութիւններ են տալի նրա մասին, չուայելով հազար տեսակ գովասանքներ. նոյնը կը կամենային և ես անել այս անգամ, բայց միայն վախենալով, որ մի գուցէ ձանձրացնեմ «Մշակի» ընթերցողներին, բաւականաւոր է մի քանի ընդհանուր դիտողութիւններով Այդպիսի հասարակական դրօսանքներ բարեգործական նպատակով գրեթէ ամենայն տարի կատարվում են այստեղ և միշտ Բագուի հասարակութիւնը անխորհրդ համակրութեամբ է վերաբերվել դէպի նրանց, բայց այս

անգամ նրա համակրանքը չափ ու սահման չուներ, մասնաւոր հայերի կողմից: Թէ որչափ էլն արտայայտուած վերջինները իրանց համակրութիւնը, այդ կարելի էր նկատել այն առատ նուէրներից, որ նրանք սփռում էին դէպի այս ու այն կողմը: Հանդիսի զվարար կարգադրիչը քաղաքագլուխ Գեաղոս-Չինովիչն էր, որը հանդիսին այն կարգի ու կանոնն էր տուել, որ նա համապատասխանում էր թէ եւրօպական և թէ ասիական ճաշակին միատեսակ դուարձութիւն տալով խառնիճաղանձ ամբոխին: Մի կողմում խաղում էր մուշկիան, միւս կողմում երգում էին դիւնորները զանազան երգեր, այնտեղ ասիական դուռնան իր երկրպագուներին ժողոված իր շուրջը հիացնում էր նրանց իր սարսափելի ձայնով: Բայց այդ բոլորից առաւել ուրախ էր տեսնել մեր հայ տիկիներին և օրհորդները աշխատութիւնը, որոնցից մէկը տոմսակներ էր վաճառում մուտքում, միւսը թէյ էր պատրաստում, երրորդը քաղցրեղէն էր բաժանում, չորրորդը համար բաւական էր իր հաշիւապահ ձգել մի ժառաղ Կրետտի վրա, որպէս զի սրա ամուր քսակից դուրս գլչէ քսան ու հինգանոցը: Եւ տեսայ օրհորդ Բագուիանին, որ այնպիսիներից էր փող դուրս բերում, որոնք ուրիշ ժամանակ բարեգործական նպատակ լսելիս երեսները չուռ են տալիս: Մի խօսքով այդ աղին և քնքոյն հայուհիները իրանց հայկական գեղեցկութեամբ, բազմապատկում էին հանդիսի գեղեցկութիւնը:

Հանդիսից գոյացած գումարն եղաւ 1351 ր. 59 Կ., որից դուրս գալով ծախքը 390 ր. կը մնայ 961 ր. 59 Կ. զուտ գումար: Այդ գումարից Մարդասիրական ընկերութեան խորհուրդը վրձնել է չորս հայ չքաւոր ուսանողներին յանձնել 600 րուբլ, այսինքն ամեն մէկին 150 րուբլ, 300 րուբլ ռուս չքաւոր աշակերտներին, իսկ մնացեալ 61 ր. 59 Կ. թողնել ընկերութեան ընթերցարանում, որ այդ գումարով գիմնադրվային հայ ընթերցասէր աշակերտները իրաւունք կուենան կարգաւ: Չը նայելով որ հանգէսը կազմուած էր յօդուտ լոկ հայ աղքատ ուսանողների, բայց ընկերութեան խորհուրդը խելացի հա-

մարեց 300 րուբլ յատկացնել ռուսներին, որովհետեւ հասարակ լօղիկան էլ այդպէս է թելադրում, քանի որ ընկերութիւնը կրում է իր վրա «Մարդասիրական» վանք անունը:

Վերջապէս իմ խօսքը այս հանդիսի մասին, ես կրկին անգամ պարտաւորութիւն եմ համարում յայտնել իմ շնորհակալութիւնը նոյնպէս աղքատ ուսանողների կողմից, որոնք ինձ անմիջապէս այդ մասին խնդրել են. նախ՝ արժանապատիւ Տէր-Թադէոս Բուզադեանին, որը հանդիսի սկզբնապատճառն եղաւ, երկրորդ՝ ընկերութեան խորհրդի բոլոր անդամներին, երրորդը՝ ժիշկ Արամեանին նրա չափազանց նեղութիւններին մասին: Հայ աղքատ ուսանողները կը տանեն իրանց հետ դէպի Ռուսաստան մի տաք գոյացումը և բարի յիշատակ իրանց հայրենակիցներին մասին: Կսկ մնաք այն ժամանակ միայն իրաւունք կուենանք պահանջել հայ ուսանողից աղքային գործունէութիւն, երբ միշտ այդպիսի համակրանքով կը ճանապարհենք նրան դէպի բարձր կրթութիւն: Թող հայ ուսանողութեան և հայ հասարակութեան մէջ տրեւ փոխադարձ համակրութիւն:

Շիրվանզադէ

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 16 յունիսի

Վերջին ժամանակներում Կովկասի և Տաճկաստանի բոլոր հայ հասարակութեան մէջ, լրագրողների միջոցով, տարածվել է լուր վեհափառ Կաթողիկոսի ծանր հիւանդութեան և ս. Էջմիածնի կառավարութեան այժմեան գրութեան մասին: Մենք բոլորովին աւելորդ ենք համարում այստեղ ապացուցանել, թէ ինչ վրդովեցուցիչ կերպով են ներդրում հաղորդած լուրերը ժողովրդի վրա՝ բաւական է մտաբերել, թէ ինչ նշանակութիւն ունի Կաթողիկոսի պաշտօնը ամբողջ ազգի աչքում և կարգաւ տպւած արդէն յօդուածները, ի նկատի ունենալով մի և նոյն ժամանակ այն հանգամանքները, որոնք ստի-

ծածում, երբ խօսում է զանազան մի և նոյն տեսակ զբոսի հեղինակների սխալների վրա և գրանով մի քանիներին սաստիկ է վիրաւորում: Գուցէ հէնց այդ վիրաւորածներից մէկն է «Народная школа»-ի մէջ տպւած քննադատութեան հեղինակը, որ ստորագրվում է «ОДНЪ ИЗЪ СПЕЦІАЛИСТОВЪ»: Մեզ իրաւունք ենք տալիս այս բանը կարծելու նրա համար, որ պ. քննադատը կոչով է վերաբերվում Ժուկի աշխատասիրութեան. նա ուզում է իրր թէ ցոյց տալ այդ գրքի թերութիւնները և, ակնարկելով Ժուկի մի քանի չնչին սխալների վրա, սկսում է սաստիկ յարձակվել հեղինակի վրա: Նա հասնում է մինչև տեղում այն ծայրահեղութեան, որ հաւատացնում է՝ իրր թէ այդ աշխատասիրութեան հեղինակը ռուսերէն լեզու չէ խմանում և վատ լեզուով է գրում, այն ինչ լեզուն բաւականին կոկիկ և կենդանի է ու այդ մեծ աշխատութիւնը շատ հեշտութեամբ է կարգաւորում:

Մենք խորհուրդ կը տայինք այդ գրքի թարգմանիչներին նոյնպէս տեղ տեղ համառօտել, որովհետեւ պ. հեղինակը համարեա ամեն մի հարցը պատմաբանօրէն է հետազօտում և նախընթաց գիտնականների սխալ և ծուռ կարծիքների հետ էլ է ծանօթացնում ընթերցողներին: Մի ժողովրդական գրութեան մէջ այդ բոլորը անհասկած աւելորդ է:

Մ. Ի. Բ. Գ.

ԿԻՆԸ ՄԱՅՐ

Ընտանիքի հիմքը մայրն է. դուրսիւն ու անտեսութիւն նորա շուրջն են ժողովրդում ապաղան նորանից ծնվում և աւելի նորանով է կերպաւորվում:

Որքան այդ հիմքն հզօր է և յարգված, այնքան նրա վրա կառուցված շէնքն ամուր է և գեղեցիկ:

Կինը, ընկերական բարօրութեան այդ առաջին ու գլխաւոր գրաւական, իւր իսկական, իւր արժանաւոր գիրքում չէ: Այդ մարդու բնական ուժն ու խառնակ ցանկութիւնը նորան ստրկացուցել ու վատացուցել են:

Այն մարդուց մէջ, որոնք նորան պաշտպանել են իւր ընկած գրութեան վեր հանելու համար, ես մասնաւորապէս ճանաչում եմ մէկին: Սա սիրտ արաւ նրան արդարեւ պաշտպանել, Ռոմ-

ասկ կոխել այն. նա ապաշխարեւորներ, որոնք վաղուց հետէ օրէնք են կոչվում և առաջնորդում են ընկերութեան վարքեւարքին, և առանց ծածմանիւ առաջարկից հասարակաց ուղղադատութեան թէ կնոջ արդեան վիճակը փոխելու ու բնական լաւին վերածելու համար հարկաւոր է այդ մասին տիրապետող օրէնքն յեղաշրջել:

Այս մարդն Լիմը զը Ժիրարդէն էր, որի հզօր ձայնն այժմ յաւիտենականութեան ծոցում լընում է:

Այս հիւրընկալ փութիկ էջում, որ ինձ շնորհվում է այստեղ, չեմ կարող քաղաւածներ անել Լիմը զը Ժիրարդէնի գրքին, որ կոչվում է Այն ու Կին, — Այդք սէր՝ Կինն հպատակ — (L'homme et la Femme, — L'homme suzerain, la Femme vassale): Բայց այստեղ գրածս՝ այդ գրքի օգուցութեան տակ եմ գրում. այնտեղ քարոզված մտքերն եմ այստեղ արծարծում, միայն այն չափով որ չափով հարկաւոր եմ դատում:

Կնոջ կոչումը մայր լինելն է: Մայր լինելում է ամփոփված կնոջ բոլոր առաքելութիւնն ու ընկերական բարձր ծառայութիւն:

Մայրութիւն բառի ետէ կինն իբրեւ մի հզօր վաճանի, մի ամուր պատնէշի ետէ է պաշտպանված: Կինը պէտք է մայր լինի. մայր՝ երբ արգանդում ունի որդին, մայր՝ երբ լոյս աշխարհ է բերել նրան և իւր կաթով սնուցանում է. մայր՝ երբ նրան հայր ու հայրենիք ճանաչել ու յարգելն է ուսուցանում. մայր՝ երբ նրան հայրենիքի և հանրի բարու վրա մինչև անգամ զլուրը դնելն է խրատում:

Մի հայր, որ հայրենիքին, որ ընկերութեան, որ մարդկութեան մի այդպիսի որդի է ընծայում, իրաւունք ունի հայրենիքի, ընկերութեան, մարդկութեան երախտագիտութեան վրայ, նա մանաւանդ իրաւունք ունի սպասելու որ ոչ ոք յետագիւ խորհրդով հետամուտ չը լինի քննելու թէ նա այդ որդին ինչպէս է ստացել: Այն այր մարդն, որ այդ որդու լինելութեան պատճառն է, գործել է ամենայն ազատութեամբ. ինչի մի և նոյն ազատութիւն նաև կինը չը պիտի ունենար, այր մարդուն հաւատարմ. կինը՝ որ գիտէ մայր լինել: Այդ մարդուց համար չի պահանջվում այդ գործի համար. ինչի կին մարդը հասարակաց կարծիքի առջև պիտի չա-

րաչար տուժէ մայր լինելուն համար. ինչի նաև այդ որդին պիտի զրկվի իւր իրաւունքներէն ու խորթ նկատվի իւր համաների աչքում, կամ՝ դեռ չը ծնված պիտի խեղդվի մօր արգանդում:

Բայց այս օրուայ կինն այդ մայրը չէ: Ինչպէս սկզբում առաջի, այր մարդու բնական ուժն ու խառնակ ցանկութիւնը նրան ստրկացուցել վատացուցել են: Նա ընտանիքի արմատը չէ համարվում և յարգված չէ, մինչև անգամ հասարակական կարծիքը հրապարակաւ անարգում է նորան՝ մազն երկայն ու խելքը կարճ քարոզելով. և այդպէս, նա, գոռոզ և ինքնահաւան այր մարդու ձեռքում, մի սեփականութիւն՝ մի ստացուածք է. որ հաճոյքի համար գործ է ածվում, և եթէ պտուղ է տալիս, սոյդ պտուղն անգամ նրա գինը չէ բարձրացնում. նա միայն մի նիւթ է, որից օգուտ է քաղում մարմնաւէրը, շահաւէրը, անձնատէրը:

Այդպէս նկատվելով, կին մարդն ոչնչացած է. էլ մայրը չէ թաղաւորդն, այլ՝ կինը. և այդ կինը թաղաւորում է իւր մարմնական գեղեցկութեամբ ու բարոյական տղեղութեամբ, և վրէժն առնում է ընկերութիւնից՝ սորան էլ իւր հետ անարգ անկումի և զանազան ցաւերի ու չօռերի անդունդը քարշ տալով:

Կին մարդիկ վիրաւորված են իրենց արժանիքի մէջ, զրկված են մինչև անգամ իրենց մայրական և ընտանեկան իրաւունքների մէջ, հաւածված են լինում նաև իրենց մասնական կեանքն այսպէս կամ այնպէս անօրինելուն համար: Այդ մարդիկ, մեծապահանջ և իրենց համար ազատ չափող ու ձեռող, կին մարդուց գլխին կատարեալ բռնաւորներ և հարստահարողներ են:

Այդ բռնութեան ու ճնշմանի արդիւնք են խորթ մայրերն, անհաստատրիմ կիներ, դուրս ընկած աղջիկներ:

Այն դուրսիւն, որով պէտք է կանայք վերանորոգվին, մայրութիւնն է. մայրութիւն իւր համայն արժանիքում, իւր բոլոր իրաւունքներով, իւր բոլոր պարտականութիւններով:

Որպէս զի կինը մայր լինի, պէտք է յետ դարձնել նորան այն իրաւունքներ, որոնցից նա զրկված է, պէտք է կատարել այն պարտականութիւններ, որոնցից ինքն հրաժարված է. պէտք է նա ընտանիքի հիմքը դառնայ:

Բայց որպէս զի այդ այդպէս լինի, պէտք է նա իւր անձի ազատ տէրը դառնայ, այսինքն պէտք է այր մարդու խնամակալութեան տակէն դուրս գայ, պէտք է վերջապէս նորա չափահասութիւնն էլ իրաւապէս ճանաչվի:

Պէտք է նորան մեծացնեն պատրաստեն մայր լինելու համար, մայր՝ որ նիւթական սնունդի հետ կարողանայ բարոյական ու մտաւոր սնունդ էլ տալ իւր երեխային, որոք մանկութեան դատարանին և ուսուցողը լինել:

Պէտք է այդպէս պատրաստված մայրացուն գործելու տղատութիւնն ունենայ, իւր կեանքի կառավարը լինի:

Նա, մայր դառնալու համար, ազատ է իւր օրը՝ տի ուղածին իրեն ամուսին ջոկել: Այդ ամուսնութիւն խառնված է լինելու սիրով վրա, փոխադարձ սիրով վրա: Սիրոյ հետ խղճում է աւանդութեան պաշտօնը, որոնք հայր ու կրթութեան են մեծում որդիք, որոնք հայրն ամուսնական դաշնադրութեան ժամանակին, նրանց հօրէն ստացած և մայրաւ կան արկղին յանձնած ունի որդիւն ալ հարկաւոր գրամը:

Ուրեմն օրոցը ապագան մօր խմտութիւնն է կախված. մայրն է տալու հայրենիքին ու ընկերութեան արժանաւոր գաւալներ ու անդամներ: Այդպէս բարձրանում է կինն և ընկերութեան մէջ իրեն վայելուչ տեղն է բռնում. կուենանայ ապագային՝ ունենալով իրաւունքներ ու պարտականութիւններ:

Կնոջ ստաբիլութիւնն ու պատիւ մայրութիւնն է լինելով, վերացված կը լինի նաև այն անտես ու անպատուութիւն՝ որ պոռնիկութիւն է կոչվում: Մի կին, մի աղջիկ, որ նեղութեան կամ ստիպական հանգամանքի առջև տեղի է տալիս, քանի հպատակվում է, էլ պոռնիկ չի կոչուի: Քանի որ նա մայր է լինելու և կը հօգայ լրացնել մայրական պարտքը:

Եւ այդ ժամանակ զփառղ աղջիկներ իրիկը էլ չեն վիժվիլ կամ խեղդվիլ. և չեն մնալ անմայր, հարուստների կամ որբանոցների զոհներում ընկեցիկ լինելով, և կամ աւաղակ մարդիկ ների ճանկերում ապականութեան վաճառք:

Ա. Մ. Կ.